ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 42

«31» 05 2022 թ. գ. Երևան

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ, ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԶԵՆՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ 2022-2024ԹԹ. ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԱՌՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետի 17.01.2019թ. N45-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի 17.12.2021թ. նիստում հաստատված «Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում 2022-2024թթ. ազգային ռազմավարության» գործողությունների ծրագիրը:

Ընդունված ռազմավարության և գործողությունների ծրագրի նպատակը ՀՀ ֆինանսական համակարգի և, ավելի լայն իմաստով, տնտեսությունը պաշտպանվածության ապահովումն է փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման ռիսկերից, ինչը նպաստում է ֆինանսական հատվածի ամբողջականության բարելավմանը և բարձրացնում դրա ապահովության ու անվտանգության մակարդակը:

Հիմք ընդունելով հիշյալ գործողությունների ծրագրով նախատեսված՝ ՀՀ դատախազության մասնակցությունը ներառող գործողությունների և միջոցառումների ժամանակին և պատշաճ մակարդակով իրականացնելու անհրաժեշտությունը և

ղեկավարվելով «Դատախազության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում 2022-2024թթ. ազգային ռազմավարության գործողությունների ծրագրի իրականացման համար նշանակել պատասխանատու ստորաբաժանումներ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի հավելվածի առանձին տողերում նշված առաջին պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին՝ մյուս պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարների հետ (առկայության դեպքում) մշակել աշխատանքային ժամանակացույց այնպես, որ հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը, մինչև յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա 5-ը, ներկայացվի ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն:

3. ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ Արմեն Մարուխյանին՝ ապահովել ստացված տեղեկատվության համակարգումը և սահմանված ժամկետներում տրամադրումը շահագրգիռ պետական մարմիններին:

5. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

6. Հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված

ՀՀ գլխավոր դատախազի 2022 թվականի
մայիսի 31 -ի N 42հրամանի

Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում 2022-2024թթ. ազգային ռազմավարության գործողությունների ծրագիր			
Գործողությունների ծրագրի համապատասխան կետը	**Բովանդակությունը**	**Վերջնաժամկետ**	**Պատասխանատու ստորաբաժանումը**
Միջանկյալ նպատակ 1 գործողություն 1.2	Սեփական ոլորտի քաղաքականությամբ կամ համանման այլ փաստաթղթերով նախատեսել սույն ռազմավարությամբ նախատեսված գործողությունները	2022թ. հուլիս	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան)
Միջանկյալ նպատակ 1 գործողություն 1.4	Ներգրավված գերատեսչությունները տեղեկություններ են ներկայացնում ՖԴԿ-ին սույն միջոցառումների ծրագրում նախատեսված միջոցառումների կատարման վերաբերյալ	Կիսամյակը մեկ՝ մինչև հուլիսի 10-ը և հունվարի 10-ը	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան)
Միջանկյալ նպատակ 1 գործողություն 1.5	Իրավապահ մարմինների միջև համագործակցությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով ներդնել էլեկտրոնային հաղորդակցության միասնական տեղեկատվական տիրույթ	2024թ. դեկտեմբեր	ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ԱԱԾ-ում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն (Արթուր Չախոյան) Համայակ Նավասարդյան (ՀՀ դատախազության գլխավոր քարտուղար) Գևորգ Թովմասյան (ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական)
Միջանկյալ նպատակ 1 գործողություն 1.7	Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի ազգային գնահատման շրջանակներում ուսումնասիրել ՀՀ-ին փոխադարձ իրավական օգնության և հանձնման հարցումներ կատարած երկրներին	2024թ. դեկտեմբեր	ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչություն (Եղիազար Ավագյան)

	ցուցաբերված օգնության որակը՝ դրա վերաբերյալ հետադարձ արձագանք ստանալու եղանակով		
Միջանկյալ նպատակ 1 գործողություն 1.8	Լրամշակել փողերի լվացմանը վերաբերող գործերի քննության ուղեցույցը՝ միջազգային համագործակցության շրջանակում իրավական օգնություն խնդրարկելու հմտություններ ձևավորելու համար	2022թ. դեկտեմբեր	ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն (Արսեն Մարտիրոսյան) ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչություն (Եղիազար Ավագյան)
Միջանկյալ նպատակ 1 գործողություն 1.8	Մշակել ահաբեկչության ֆինանսավորմանը վերաբերող գործերի քննության ուղեցույց՝ դրանում ներառելով նաև միջազգային համագործակցության շրջանակում իրավական օգնություն խնդրարկելու հմտություններ ձևավորելու թեման	2023թ. դեկտեմբեր	ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ԱԱԾ-ում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն (Արթուր Չախոյան) ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչություն (Եղիազար Ավագյան)
Միջանկյալ նպատակ 1 գործողություն 1.8	Կազմակերպել ներգրավված գերատեսչությունների աշխատակիցների ուսուցումը միջազգային իրավական օգնություն ստանալու նպատակով դիմելու թեմայով	Առնվազն 2 տարին 1 անգամ	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան) ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչություն (Եղիազար Ավագյան)
Միջանկյալ նպատակ 1 գործողություն 1.10	Կազմակերպել ուսուցում ոչ պաշտոնական համագործակցության շրջանակներում իրավապահ կամ այլ բնույթի տեղեկությունների ստացման պրակտիկան բարելավելու ուղղությամբ	Առնվազն 2 տարին 1 անգամ	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան) ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչություն (Եղիազար Ավագյան)
Միջանկյալ նպատակ 1 գործողություն 1.11	Կազմակերպել ուսուցում իրավաբանական անձանց հիմնական հատկորոշիչների և իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու և փոխանակելու նպատակով իրականացվող միջազգային	Առնվազն 2 տարին 1 անգամ	ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն (Սիրո Ամիրխանյան)

	համագործակցության տեսակների վերաբերյալ		
Միջանկյալ նպատակ 3 գործողություն 3.1	Կազմակերպել ուսուցումներ իրավապահ մարմինների աշխատակիցների համար ֆինանսական հետախուզության տվյալների և այլ վերաբերելի տեղեկությունների օգտագործման թեմայով	Տարեկան առնվազն 1 անգամ	ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ԱԱԾ-ում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն (Արթուր Չախոյան)
Միջանկյալ նպատակ 3 գործողություն 3.1	Շարունակական կերպով իրավապահ մարմինների աշխատակիցներին իրազեկել ՖԴԿ-ին հարցումներ կատարելու չափանիշների վերաբերյալ	2022թ. դեկտեմբեր	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան) ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ԱԱԾ-ում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն (Արթուր Չախոյան)
Միջանկյալ նպատակ 3 գործողություն 3.5	Կազմակերպել իրավապահ մարմինների աշխատակիցների ուսուցումը պոտենցիալ փողերի լվացման գործերի հայտնաբերման և նախաքննության, այդ թվում՝ զուգահեռ ֆինանսական քննության իրականացման, ինչպես նաև փողերի լվացման համար 2017-2020թթ. ռիսկերի ազգային գնահատման արդյունքների համաձայն առավել ռիսկային նախորդող հանցագործությունների[1] քննության մեթոդաբանության թեմաներով	Տարեկան առնվազն 1 անգամ	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան) ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն (Արսեն Մարտիրոսյան) ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ԱԱԾ-ում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն (Արթուր Չախոյան)
Միջանկյալ նպատակ 3 գործողություն 3.7	Լրամշակել փողերի լվացման գործերի քննության ուղեցույցը դրանում ներառելով այլ երկրում կատարված նախորդող հանցագործությունների, երրորդ անձանց կողմից լվացման, միայն փողերի լվացման հանցակազմով գործերի քննության առանձնահատկությունների վերաբերյալ դրույթներ	2022թ. դեկտեմբեր	ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն (Արսեն Մարտիրոսյան)
Միջանկյալ նպատակ 1 գործողություն	Կազմակերպել իրավապահ մարմինների աշխատակիցների ուսուցումը փողերի լվացման	2024թ. դեկտեմբեր	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն

[1] Առանձնապես խոշոր չափերով խարդախություն, կազմակերպված խմբի կողմից կատարված ապօրինի ձեռնարկատիրություն, հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելը, առանձնապես խոշոր չափերով յուրացնելը կամ վատնելը, պաշտոնեական կեղծիքը

3.7	գործերի տարբեր տեսակների քննության առանձնահատկությունների թեմայով, ինչպես նաև դատավորների ուսուցումը փողերի լվացման տարբեր դրսևորումները թեմայով		(Արմեն Մարուխյան) ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն (Արսեն Մարտիրոսյան)
Միջանկյալ նպատակ 1 գործողություն 3.11	Լրամշակել փողերի լվացման գործերի քննության ուղեցույցը՝ դրանում ներառելով մեթոդաբանական մոտեցումներ հետախուզական բնույթի տեղեկությունները փոխադարձ իրավական օգնության հարցումներում օգտագործելու եղանակների վերաբերյալ	2024թ. դեկտեմբեր	ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն (Արսեն Մարտիրոսյան) ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչություն (Եղիազար Ավագյան)
Միջանկյալ նպատակ 1 գործողություն 3.14	Կազմակերպել իրավապահ մարմինների աշխատակիցների ուսուցումը ահաբեկչության ֆինանսավորման գործերի տարբեր տեսակների քննության առանձնահատկությունների թեմայով, ինչպես նաև դատավորների ուսուցումը ԱՖ տարբեր դրսևորումները թեմայով	2024թ. դեկտեմբեր	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան) ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ԱԱԾ-ում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն (Արթուր Չախոյան)
Միջանկյալ նպատակ 1 գործողություն 3.15	Կազմակերպել ներգրավված գերատեսչությունների աշխատակիցների ուսուցումը ահաբեկչության ֆինանսավորման գործերի նախաքննության և քրեական հետապնդման առանձնահատկությունների թեմայով	Առնվազն 2 տարին 1 անգամ	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (Արմեն Մարուխյան) ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ԱԱԾ-ում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն (Արթուր Չախոյան)
Միջանկյալ նպատակ 1 գործողություն 3.21	Ահաբեկչության ֆինանսավորման գործերի քննության ուղեցույցում ներառել ահաբեկչության ֆինանսավորման գործունեությանն առնչվող ակտիվների և գործիքների բռնագրավմանն առնչվող մեթոդաբանությունը	2023թ. դեկտեմբեր	ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ԱԱԾ-ում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն (Արթուր Չախոյան) ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն (Սիրո Ամիրխանյան)